ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**.

Հայկ Սողբաթյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության գլխավոր տեսուչ.

2. Գործուղման վայրը և ժամկետները - Վրաստան (Թբիլիսի), 2026 թվականի հունիսի 8-12-ը ներառյալ.

3. Հրավիրող կողմը.

Դաբաղի վերահսկողության եվրոպական հանձնաժողով (EUFMD).

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Հայաստան - Վրաստան դաբաղ հիվանդության սիմուլյացիոն վարժանքների իրականացում, որի ընդհանուր նպատակն է ամրապնդել դաբաղի դեմ համակարգված պատրաստվածության և արձագանքման տարածաշրջանային կարողությունները՝ կիրառելով վաղ հայտնաբերման և հիվանդությունների հետազոտման արձանագրությունները, բարելավելով տարածաշրջանային ռիսկերի հաղորդակցությունը:

5. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել են դաբաղի դեմ ազգային և տարածաշրջանային պատրաստվածության և արձագանքման կարողությունների հետագա բարելավմանն ուղղված գործողությունները.

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպման ընթացքում ներկայացվել է Հայաստանում և Վրաստանում իրականացված դաբաղ հիվանդության սիմուլյացիոն վարժանքի արդյունքները.

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ պայմանավորվածություններ, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում առաջարկվել է խորացնել համագործակցությունը ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային գործընկերների հետ:

Գործուղվող՝ Հայկ Սողբաթյան

16.06.2026թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)